Խեղդվել է վեց երեխա

2

5

Լեռների նենգությունը

Դրական մտածողությունը դրական է դարձնում կյանքը

6

7

Ֆուտբոլային արտակարգ պատահար

ISSN 1829-149X

10025

9 771829 149003

ով իրազեկված է, նա զգաշտպանված է

արտակարգ թերթ

N 25 (346) 09.7.2010 - 14.7.2010 www.emergency.am

ՀՀ վարչապետն այցելեց Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոց

Հուլիսի 6-ին Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցում եղավ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը՝ Արտակարգ իրավիճակների, Բնապահպանության ու Գյուղատնտեսության նախարարների եւ խնդրով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ուղեկցությամբ:

Հաշվի առնելով գերեզմանոցում ստեղծված արտակարգ իրավիճակը՝ կառավարությունը 2010 թվականի երկրորդ եռամսյակում 32 միլիոն դրամ է հատկացրել գերեզմանոցի վտանգների չեզոքացման աշխատանքների համար: Արդեն կատարվել է շուրջ 31 մլն դրամի շինարարական աշխատանք, 700 հազար դրամ էլ ծախսվել է նախագծային եւ այլ աշխատանքների իրականացման վրա: Գերեզմանոցի տարածքում իրականացվում է հսկողություն:

Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոց ստեղծվել է դեռ 1970-ական թվականներին: Բայց ստեղծողները ոչ տեղանքային պայմաններն են հաշվի առել, ոչ էլ անվտանգության կանոնները: Ուղղակի 5 մետրից էլ պակաս խորությամբ փոս են փորել, հետո տոպրակներով եւ տարաներով բերել են ու մոտ 600 տոննա թունաքիմիկատ, հիմնականում՝ դդտ, լցրել իրար վրա եւ թաղել: Ու քանի որ տեղանքն ակտիվ սողանքային է, գերեզմանոցն իր վտանգավոր պարունակությամբ հանդերձ արդեն 30 տարի է՝ սահում ու սահում է դեպի հարեւան տարածքները: Իսկ հարեւանները ոչ միայն Զրաշեն, Գեղանիստ եւ Մուշավան գյուղերն են, այլեւ բնական ցորենի արգելանոցը:

Բնության կողմից ստեղծված սողանքային սպառնալիքը դեռ հերիք չէ, մարդիկ էլ են ժամանակ առ ժամանակ վիճակն ավելի բարդացնում: 100 մետր երկարությամբ եւ 20 մետր լայնությամբ այդ հողակտորի փշալարերն արդեն վաղուց պոկել են ու բերում են հենց թունաքիմիկատների վրա անասուն են արածեցնում: Իսկ մեկ տարի առաջ նույնիսկ անհայտ մարդիկ տրակտորով քանդել էին գերեզմանոցը՝ երեւի կարծելով, թե այդտեղ գանձ է թաղված, արդյունքում մեծ քանակությամբ վտանգավոր թունաքիմիկատներն արտաքին աշխարհ էին դուրս եկել: Վիճակն, իհարկե, շտկվել էր, նյութերը վերաթաղվել էին, բայց հարցը մնացել էր բաց ու մինչ օրս էլ մնում է հրատապ. խնդիրը լուծել է պետք, քանի դեռ անդառնալի հետեւանքներ չեն եղել:

Տարածքը գտնվում է սողանքային գոտում, հողն այստեղ սահում է՝ վտանգավոր նյութերն էլ հասնում են հարակից բնակավայրեր, որտեղ գյուղացիները հող են մշակում, անասնապահությամբ զբաղվում: Ի դեպ, վարչապետ Սարգսյանին զեկուցվել է, որ հարցի առնչությամբ ՀՀ ոստիկանությունն արդեն հարուցել է քրեական գործ:

- Կառավարությունն արդեն բավական միջոցներ է ծախսել, որպեսզի վտանգավոր հետեւանքները գերեզմանատան մակերեսի բացման այս պահին վերացնենք, չեզոքացնենք: Բոլոր համայնքները տեղյակ են պրոբլեմի մասին, նրանք նույնպես ուշադիր են լինելու: Դրան, իհարկե, օգնեց նաեւ հրապարակայնությունը, որ ապահովվեց այս խնդրի շուրջ: Մենք ուզում ենք շնորհակալություն հայտնել բոլոր հասարակական կազմակերպություններին՝ խնդրի կարգավորման գործում իրենց ակտիվ մասնակցության համար: Համոզված եմ, որ այնպիսի լուծումներ ենք տալու, որ այս խնդիրը վերջնականապես լուծվի եւ բոլորս վստահ լինենք, որ շրջակա միջավայրին այլեւս որեւէ վտանգ չի սպառնում,- ասել է վարչապետը:

Գերեզմանոցի տարածքում շրջելուց հետո վարչապետը լսեց հասարակական կառույցների առաջարկները խնդրի լուծման եղանակների վարաբերյալ: Ի պատասխան այն պնդման, որ այրման տարբերակը Հայաստանում կիրառելը ցանկալի չէ, վարչապետը վստահեցրեց, որ կիրառվելու է ամենաանվտանգ ու արդյունավետ եղանակը:

Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը վարչապետին տեղեկացրեց, որ վերջինիս հանձնարարությամբ միջգերատեսչական հանձնաժողով արդեն ստեղծված է:

- Արդեն գիտենք, թե հանրապետության տարածքում որտեղ ունենք նմանատիպ տարածքներ, որտեղից այդ թունավոր նյութերը պետք է դուրս բերվեն ու պահեստավորվեն: Ինչ վերաբերում է մեր գործողությունների երրորդ փուլին՝ թունաքիմիկատների ոչնչացման աշխատանքներին, ապա զեկուցեմ, որ աշխատանքային հանդիպումներ ենք ունենում միջազգային ամենահեղինակավոր փորձագետների հետ, որոնց հետ խորհրդակցելուց հետո միայն կընտրվի հարցի լուծման ամենաճիշտ տարբերակը:

Գյուղնախարարը տեղեկացրեց, որ շրջակա համայքներում անասունների կաթի, բանջարեղենի, մրգի ու կանաչեղենի լաբորատոր հետազոտությունները ցույց են տվել, որ դրանցում թունաքիմիկատներ չեն պարունակվում:

Վարչապետի հանձնարարությամբ՝ շահագրգիռ նախարարությունների կողմից մշակվելու է հայեցակարգ՝ Հայաստանում նմանատիպ հիմնախնդիրներին վերջնական լուծում տալու համար:

«Արտակարգ ալիք» հեռուստահաղորդում

- ՀՀ կառավարությունը շարունակում է ուշադրության կենտրոնում պահել Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի հիմնախնդիրը: Այս շաբաթ այնտեղ եղավ նաեւ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

- Ի՞նչ է արտակարգ իրավիճակը. ներկայացնում են մասնագետները:

Ուրբաթ, հուլիսի 9-ին, 23:50-ին՝ Շանթի եթերում:

Կրկնությունը՝ շաբաթ, 10:55-ին եւ կիրակի, 10:30-ին:

«Էլիտ գրուպ». կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպի» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպը» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ»՝ բնակելի, առեւտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպը» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ✆ 56-69-22, 56-69-33:

քրոնիկոն

Հայաստանի փրկարար ծառայություն զանգահարեք

1-01, 1-12

Ջրահեղձում

Հուլիսի 2-ին, ժամը 15.25-ին ահազանգ է ստացվել, որ Սեւանա լճում՝ Գեղարքունիքի մարզի Հայրավանք գյուղին հարակից տարածքում, ջրահեղձվել է ոմն քաղաքացի, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր են մեկնել Սեւանի ջրափրկարարական ծառայության ջրասուզակները:

Ժամը 16.06-ին լճից դուրս է բերվել նույն մարզի Նորատուս գյուղի բնակիչ, 18-ամյա Ալիկ Միքայելյանի դին եւ հանձնվել շտապ օգնության բրիգադին:

Ընկել է լճակը

Հուլիսի 3-ին, ժամը 13.28-ին Կոտայքի մարզից տեղեկություն է ստացվել, որ Հրազդանի մերձակայքում գտնվող «Ծովինար» ռեստորանին հարակից լճակը տղամարդ է ընկել:

Դեպքի վայր են մեկնել մարզային փրկարար ջոկատը եւ ջրափրկարար-ջրասուզակների օպերատիվ խումբը:

Տեղում պարզվել է, որ լճակն է ընկել Հրազդանի բնակիչ՝ 31-ամյա Ռուսլան Միքայելյանը:

Որոնողական աշխատանքների արդյունքում՝ հուլիսի 5-ին, ժամը 09.33-ին «Ծովինար» ռեստորանին հարակից լճակում հայտնաբերվել է Ռ. Միքայելյանի դին:

Դին դուրս է բերվել լճակից եւ հանձնվել շտապօգնության աշխատակիցներին:

Պատահարներ Սեւանա լճում

Հուլիսի 3-ին, ժամը 18.30-ին հատուկ ջրափրկարարական ջոկատի ջրասուզակների կողմից Սեւանի «Մալիբու» լողափում, լողանշանի հարեւանությամբ, ջրից դուրս է բերվել Արարատի մարզի Վերին Արտաշատ գյուղի բնակիչ, 29-ամյա Հայկ Ազիզյանը:

Առաջին բուժօգնություն ստանալուց հետո տուժածը տեղափոխվել է Սեւանի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը գնահատվում է բավարար:

* * *

Հուլիսի 3-ին, ժամը 20.20-ին Սեւանի ոստիկանության բաժնից ստացված տեղեկության համաձայն՝ «Մալիբու» լողափում քաղաքացի է խեղդվել:

Հատուկ ջրափրկարարական ջոկատի ջրասուզակների կողմից իրականացված որոնողական աշխատանքների արդյունքում ջրից դուրս է բերվել Արարատի մարզի Այգեստան գյուղի բնակիչ, 21-ամյա Ռաֆիկ Սարգսյանի դին:

* **

Հուլիսի 5-ին, ժամը 19.50-ին տեղեկություն է ստացվել, որ Սեւանա լճում՝ Շորժա գյուղին հարակից լողափում, կա ջրահեղձված քաղաքացի, եւ անհրաժեշտ է օգնություն:

Դեպքի վայր մեկնած ջրափրկարարները լճից դուրս են բերել Ճամբարակ քաղաքի բնակիչ, 1983 թ. ծնված Ալիկ Խաչատրյանի դին եւ հանձնել շտապօգնության բրիգադին:

* * *

Հուլիսի 5-ին, ժամը 20.35-ին ահազանգ է ստացվել, որ Սեւանա լճի «Իշխան» լողափում կա ջրահեղձված քաղաքացի, եւ անհրաժեշտ է ջրասուզակների օգնությունը:

Մինչ ջրափրկարարների՝ կանչի վայր հասնելը, քաղաքացիների կողմից լճից դուրս է բերվել Հրազդանի բնակիչ, 1991 թ. ծնված Իգոր Աբրահամյանի դին եւ հանձնվել շտապօգնության բրիգադին:

Ընկել է ջրանցքը

Հուլիսի 6-ին, ժամը 23.30-ին Կոտայքի մարզից տեղեկություն է ստացվել, որ Չարենցավան քաղաքի մոտով անցնող ջրանցքը մարդ է ընկել:

Դեպքի վայր է մեկնել Կոտայքի մարզային փրկարարական ջոկատը:

Դեպքի մասին տեղյակ են պահվել մարզային ԱԱԾ, ոստիկանության օպերատիվ հերթապահները եւ Երեւան-Հրազդան «Ռոգում ջրառ» ՓԲԸ-ի տնօրենը:

Փրկարարների ուժերով որոնողական աշխատանքներ են իրականացվել ջրանցքի երկայնքով եւ ջրամբարի ափամերձ տարածքներում:

Մինչեւ ժամը 03.30-ը ընթացած որոնողական աշխատանքներն արդյունք չեն տվել:

Աշխատանքները կվերսկսվեն հուլիսի 7-ի առավոտյան՝ դեպի ջրանցք ջրի մուտքը փակելուց եւ ջրի մակարդակն իջեցնելուց հետո:

Գազի բալոնի պայթյուն

Հուլիսի 2-ին, ժամը 23.25-ին Ախուրյանի ոստիկանության բաժնից տեղեկություն է ստացվել, որ Բայանդուր գյուղում գազալիցքավորում կատարելուց հետո, «ԳԱԶԵԼ» մակնիշի 2000 L պետհամարանիշի ավտոմեքենայում տեղի է ունեցել գազի բալոնի պայթյուն:

Պատահարի հետեւանքով զոհվել է 60-ամյա Սիսակ Բաղդասարյանը, իսկ 34-ամյա Հենրիկ Բաղդասարյանը տեղափոխվել է Գյումրիի Գյուլբենկյանի անվան հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ Հ. Բաղդասարյանի վիճակը գնահատվում է խիստ ծանր:

Ստացել է այրվածքներ

Հուլիսի 5-ին, ժամը 11.30-ին ոստիկանությունից տեղեկություն է ստացվել, որ Արմավիրի մարզի Փշատավան գյուղի բնակիչ, 1955 թ. ծնված Մ. Ենգիբարյանի կողմից ապակե տարայով բենզին տեղափոխելիս տարան կոտրվել է:

Առաջացած հրդեհի պատճառով Մ. Ենգիբարյանն ստացել է այրվածքներ եւ տեղափոխվել Արմավիրի բժշկական կենտրոն, այնուհետեւ՝ Երեւանի ճառագայթային բժշկության եւ այվածքների գիտական կենտրոն: Ըստ բժիշկների՝ տուժածն ստացել է 2-3-րդ կարգի այրվածքներ եւ նրա վիճակը ծանր է:

Թունավորում

Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչությունից տեղեկություն է ստացվել, որ հուլիսի 2-ին, ժամը 12.00-ի սահմաններում, այգեգործական նպատակներով «Ռոդոնիլ գոլդեն» բուժանյութով ծառերը մշակելիս, թունավորվել եւ Եղեգնաձորի հիվանդանոց են տեղափոխվել նույն քաղաքի բնակիչներ՝ 61-ամյա Միհրանուշ Վարդանյանը եւ 11-ամյա Սուրեն Հովհաննիսյանը: Ավելի ուշ տուժածները տեղափոխվել են Երեւանի «Արմենիա» բժշկական կենտրոն:

Բժիշկների կողմից տուժածների վիճակը բնութագրվել է միջին ծանրության:

Օձի խայթոցի՞ց

Արագածոտնի մարզից տեղեկություն է ստացվել, որ հուլիսի 2-ին, ժամը 20.05-ի սահմաններում Թալինի հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է Արտենի գյուղի բնակիչ, 41-ամյա Վախթանգ Մարգարյանը:

Նախնական տվյալներով՝ Վ. Մարգարյանին հուլիսի 1-ին օձ է խայթել. հարազատները փորձել են բուժել տնային պայմաններում, սակայն հաջորդ օրը տուժածի վիճակը վատթարացել է, եւ որոշել են հոսպիտալացնել:

Մեքենան դուրս է եկել ճանապարհից

Հուլիսի 3-ին, ժամը 16.24-ին ահազանգ է ստացվել, որ Լոռու մարզում՝ Ստեփանավանի հարավային հատվածում գտնվող «Անահիտ» հանգստյան տան մոտակայքում տեղի է ունեցել ավտոպատահար, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարար ջոկատը:

Տեղում պարզվել է, որ Ստեփանավանի բնակիչ Ա. Սավթանյանին պատկանող «ԳԱԶ-24» մակնիշի 18 OS 144 պետհամարանիշի ավտոմեքենան սահելով դուրս է եկել անտառամիջյան ճանապարհից եւ բախվել ծառին:

Փրկարարների միջոցով ավտոմեքենան դուրս է բերվել երթեւեկելի հատված:

Տուժածներ չկան:

>>> 3

միջազգային լուրեր

Առանց ջրի

Մեքսիկայի հյուսիս-արեւելքում շուրջ 130 հազար մարդ մեկ շաբաթից ավելի մնացել են առանց ջրի: Պատճառը տարածաշրջանում մոլեգնող «Ալեքս» փոթորիկն է:

Խանութներում վաճառվող խմելու ջրի գինն աճել է երեք անգամ: Տեղական իշխանությունները հայտարարել են, որ փոթորկից տուժած շրջաններ ջուր եւ անհրաժեշտ ապրանքներ հասցնելու համար հարկավոր են ուղղաթիռներ:

Պաշտոնական տվյալներով՝ «Ալեքս» փոթորկի զոհ է դարձել 12 մարդ:

Խեղդվել է վեց երեխա

Հուլիսի 7-ին Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում՝ Ազովի ծովում լողալիս խեղդվել է վեց երեխա եւ նրանց հսկող դաստիարակներից մեկը:

«Ազով» ճամբարում ամառային հանգիստն անցկացնող մի խումբ երեխաներ դաստիարակների ուղեկցությամբ մեկնել էին ծովային էքսկուրսիայի: Թեեւ ծովի տվյալ հատվածը նախատեսված չէր լողալու համար, այնուամենայնիվ, մեծահասակները երեխաներին լողալու թույլտվություն էին տվել: Լողալու ընթացքում երեխաներից մի քանիսը սկսել են խեղդվել: Նրանց օգնության է շտապել 27 տարեկան դաստիարակը: Երկու տղայի հաջողվել է փրկվել: Երեխաներից վեցը եւ օգնության հասած դաստիարակը խեղդվել են:

Բոլոր երեխաները մոսկովյան նույն դպրոցի սաներ են եղել: Հուլիսի 8-ին դեպքի վայր են հասել ծնողները: Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Ռուսաստանի նախագահը հանձնարարական է տվել ստուգումներ իրականացնել Կրասնոդարի երկրամասի բոլոր ամառային ճամբարներում:

Ողջակիզվել է 24 մարդ

Չինաստանի Ցզյանսի նահանգի Ուսի քաղաքում ուղեւորատար ավտոբուսում բռնկված հրդեհի հետեւանքով զոհվել է 24 մարդ, եւս 19-ը ստացել են տարբեր աստիճանի այրվածքներ:

Հրդեհի բռնկման պատճառները ճշտվում են: Իրականացվում է հետաքննություն:

200 զոհ պայթյունից

Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում բեռնատարի պայթյունի հետեւանքով զոհվել է 200 եւ լուրջ վնասվածքներ ստացել 100 մարդ:

Դեպքը տեղի է ունեցել երկրի արեւելքում գտնվող Հարավային Կիվու արվարձանում: Դեռեւս անհայտ պատճառներով բենզատար մեքենան շրջվել է, եւ նրանից թափվել է վառելիքը: Տեղի բնակիչները սկսել են հավաքել ցիստեռնից հոսող վառելիքը, երբ որոտացել է պայթյունը: Զոհերի մեծ մասը նույն գյուղի բնակիչներ են, որոնք այդ պահին գտնվել են փողոցում եւ դիտելիս են եղել ֆուտբոլի աշխարհի առաջնության հերթական խաղը: Հաղորդվում է նաեւ, որ զոհվել են ՄԱԿ-ի մի քանի խաղաղապահներ, որոք փորձել են արգելել վառելիքի գողությունը:

Պայթյունին հետեւել է ուժեղ հրդեհ, որը մոխրացրել է գյուղի մի քանի տուն:

Հրդեհ նավ-ռեստորանում

Հուլիսի 7-ի գիշերը Մոսկվայում հրդեհ է բռնկվել «Մամա Զոյա» նավ-ռեստորանում: Վերջին տվյալներով՝ ռեստորանի երեք աշխատակից համարվում է անհետ կորած:

Հրդեհին հինգբալանոց սանդղակով տրվել էր բարդության երկրորդ աստիճան: Դեպքի վայրում աշխատել է 10 հրշեջ հաշվարկ: Կրակն ամբողջությամբ վերացրել է ռեստորանի երկհարկանի փայտյա շինությունը:

Ըստ նախնական վարկածի՝ հրդեհի բռնկման պատճառը հրկիզումն է:

Ֆաինա Թյունիբաբյան

արագ արձագանքման ծառայություններ ԱԱԾ

<<<

* * *

Հուլիսի 3-ին, ժամը 22.29-ին ահազանգ է ստացվել, որ Երեւան-Սեւան ավտոճանապարհի 17-րդ կիլոմետրում՝ Արզնի գյուղ տանող կամրջի մոտ, տեղի է ունեցել ավտոպատահար, կա տուժած, եւ անհրաժեշտ է օգնություն:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Դեռեւս չպարզված հանգամանքներում, «Մերսեդես Ս-320» մակնիշի 20 ՕՍ 626 պետհամարանիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ շրջվել:

Պատահարի հետեւանքով վարորդը՝ Երեւանի բնակիչ, 28-ամյա Արծրուն Պողոսյանը, ստացել է տարբեր մարմնական վնասվածքներ ու տեղափոխվել Աբովյանի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը բավարար է:

Հայտնաբերվել է դիակ

Հուլիսի 5-ին, ժամը 13.03-ին Երեւանի բնակիչ Գ. Գաբրիելյանից ահազանգ է ստացվել, որ իր հարեւանուհին չի պատասխանում դռան թակոցներին, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Փրկարարները բացել են Մարգարյան 2/21-րդ հասցեում գտնվող բնակարանի դուռը, որտեղ հայտնաբերվել է 1946 թ. ծնված Գոհար Ռազգոեւայի դին եւ հանձնվել իրավապահ մարմիններին:

Ընկել է ձորը

Հուլիսի 5-ին, ժամը 19.25-ին Դիլիջանի շտապօգնության ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ Դիլիջան-Սեւան ավտոմայրուղու 2-րդ ոլորանում ավտոմեքենա է ընկել ձորը եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Դեռեւս չպարզված հանգամանքներում «Մազդա 3» մակնիշի 10 ՕՏ 512 պետհամարանիշի ավտոմեքենան դուրս է եկել ավտոճանապարհի երթեւեկելի մասից եւ ընկել ձորը:

Փրկարարների ուժերով մեքենան դուրս է բերվել ձորից: Տուժածներ չկան:

Հայտնաբերվել է ական

Հուլիսի 6-ին ոստիկանությունից տեղեկություն է ստացվել, որ ժամը 14.00-ի սահմաններում քաղաքացի Ժ. Խալոյանի կողմից մարզի Հին Առափի եւ Նոր Առափի գյուղերը միացնող կամրջի տակ հայտնաբերվել է ականանետի ական:

Դեպքի մասին տեղյակ են պահվել ՀՀ ազգային անվտանգության ծառայության եւ ՊՆ օպերատիվ հերթապահները: Դեպքի վայր են մեկնել Ախուրյանի հրշեջ-փրկարարական ջոկատի օպերատիվ խումբը, ՀՀ ՊՆ սակրավորների խումբը, ոստիկանության եւ ԱԱԾ աշխատակիցներ:

Տեղում պարզվել է, որ զինամթերքը «ՌՊԳ-7» տիպի ական է:

Ականը տեղափոխել է Գյումրու կայազորի կրակադաշտ՝ ոչնչացնելու նպատակով:

Ամոնիակի արտահոսք

Հուլիսի 7-ին, ժամը 17.17-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից ահազանգ է ստացվել, որ Արագածոտնի մարզի Կարբի գյուղում գտնվող «Թամարա Ֆրուտ» ՍՊԸ-ի արտադրամասերից մեկում ամոնիակի բալոն է պայթել:

Դեպքի վայր են մեկնել երկու մարտական հաշվարկ, ՄՓՎ փրկարար ջոկատը եւ օպերատիվ խումբը: Դեպքի վայրում պարզվել է, որ ամոնիակի մղման պոմպի ու խողովակաշարի միացման հատվածի ներդիրի վնասվածքի հետեւանքով տեղի է ունեցել ամոնիակի արտահոսք (60-70 կգ):

Հրշեջ-փրկարարները ջրային վարագույրի միջոցով կանխել են ամոնիակի տարածումը, իսկ «Թամարա Ֆրուտ» ՍՊԸ-ի վթարավերականգնողական խումբը դադարեցրել է ամոնիակի արտահոսքը եւ փոխարինել վնասված ներդիրը:

Տուժածներ չկան:

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 158 դեպք, որոնց գերակշիռ մասը՝ խոտածածկ տարածքներում:

Այրվածքներ հրդեհից

Հուլիսի 2-ին Գեղարքունիքի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 15.40-ին հրդեհ է բռնկվել Երեւան-Դիլիջան ավտոմայրուղու 68 կմ-ում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 15.55-ին, մարվել՝ 16.30-ին:

Մասամբ այրվել է «ԶԻԼ-130» մակնիշի 037 ՕԼ 252 պետհամարանիշի բեռնատար ավտոմեքենան:

Պատահարի հետեւանքով մեքենայի վարորդ Ս.Շահբազյանն ստացել է 1-2-րդ կարգի այրվածքներ եւ շտապօգնության բրիգադով տեղափոխվել Սեւանի հիվանդանոց: Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը բավարար է:

սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. հուլիսի 1-ից 7-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի եւ հարակից տարածքներում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել են մեկ թույլ երկրաշարժ: 3 բալանոց սեյսմիկ ցնցումը տեղի է ունեցել հուլիսի 5-ին Նախիջեւան-Հայաստան սահմանային գոտում, Օրդուբադ քաղաքից 12 կմ դեպի հյուսիս-արեւմուտք:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել հինգ երկրաշարժ: Վրաստանի տարածքում գրանցվել է երկու երկրաշարժ, առաջինը՝ հուլիսի 1-ին 3 բալ ուժգնությամբ Ախալքալակի քաղաքից 14 կմ հյուսիս-արեւմուտք, իսկ երկրորդը՝ հուլիսի 3-ին՝ 4-5 բալ ուժգնությամբ Թբիլիսի քաղաքից 31 կմ հյուսիս-արեւմուտք: Հուլիսի 2-ին 3-4 բալ ուժգնությամբ երկու երկրաշարժ է տեղի ունեցել Թուրքիայում. առաջինը՝ Վան քաղաքից 41 կմ հյուսիս-արեւելք, իսկ երկրորդը՝ Հորասան քաղաքից 42 կմ հարավ-արեւելք: Հուլիսի 7-ին Իրանում՝ Խոյ քաղաքից 12 կմ հարավ-արեւելք տեղի է ունեցել երկրաշարժ, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 3 բալ:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է երկու ուժեղ երկրաշարժ: Հուլիսի 2-ին 6.3 մագնիտուդով ուժեղ սեյսմիկ իրադարձություն է տեղի ունեցել Վանուատու կղզիների հատվածում: Հուլիսի 4-ին ճապոնական Հոնսյու կղզու տարածքում գրանցվել է ուժեղ երկրաշարժ, որն ունեցել է 6.4 մագնիտուդ: Նշված երկրաշարժերի հետեւանքով զոհերի եւ ավերածությունների մասին տեղեկություններ չկան:

ՍՊԱԾ գործակալություն

Ինչպես են կատուները կանխագուշակում երկրաշարժը

Սեյսմիկ տեսակետից վտանգավոր տարածաշրջանում ապրող մարդիկ արդեն վաղուց են ուշադրություն դարձրել ուժեղ երկրաշարժերից առաջ կենդանիների առանձնահատուկ վարքագծին: Կարծիք կա, որ կենդանիների մոտ 70 տեսակ կարող է հանդես գալ որպես յուրահատուկ երկրաշարժագիր (սեյսմոգրաֆ), եւ այդ ցուցակում առաջին տեղերից մեկը զբաղեցնում են կատուները: Այդ հանգամանքն առավել արժեքավոր է այն պատճառով, որ նրանք գործնականում մշտապես գտնվում են մարդու կողքին: Պատմությանը հայտնի են շատ դեպքեր, երբ երկրաշարժերի կամ հրաբուխների ժայթքումների նա-

խօրյակին կատուներն առանց վարանելու լքում են իրենց տերերին, հեռանում են քաղաքից եւ վերադառնում են միայն աղետից հետո: Բազմաթիվ դիտարկումներից դատելով՝ տարերային աղետից առաջ կատուները գրգռված են լինում. նրանց մազերը ցցվում են, ականջները սեղմվում. նրանք բարձր եւ առանց ակնհայտ պատճառի մլավում են, դողում, թաքնվում, ձգտում են դուրս գալ տնից, իսկ երբեմն էլ պարզապես անշարժանում են:

Հնարավոր է, որ այդ ընտանի կենդանիներն զգում են այնպիսի ցնցումներ, որոնք չեն կարող գրանցել անգամ սարքերը: Մեկ այլ վարկածի համաձայն՝ նման իրավիճակում կատուների այդպիսի վարքագծի պատճառն այն է, որ նրանք արձագանքում են երկրաշարժերին նախորդող ստատիկ էլեկտրականության փոփոխությանը: Մարդու օրգանիզմը նույնպես զգում է այդ փոփոխությունները. զարկերակն արագանում է, գրգռվում է նյարդային համակարգը: Բացի դրանից, կատուները մարդկանցից ավելի ուժեղ են արձագանքում երկրի մագնիսական դաշտի փոփոխություններին եւ ինֆրաձայնին, որոնք հաճախ նախորդում են երկրաշարժին: Գիտությունը դեռեւս ստույգ չի սահմանել, թե այդ գործոններից հատկապես որն է կենդանիներին թույլ տալիս «կանխագուշակություններ» անելու: Հավանաբար, չորսն էլ. հողի աննշան տատանումներն զգալը, էլեկտրաստատիկ ազդեցությունը, ինֆրաձայնային եւ մագնիսական տատանումներն ազդում են կատուների՝ «կանխագուշակություն» անելու ընդունակության վրա: Համենայն դեպս, սեյսմիկ վտանգի ենթակա շատ երկրների գիտնականներ լրջորեն են մոտենում այդ հիմնախնդրի ուսումնասիրմանը, եւ այդ հետազոտություններում մեծ դեր են խաղում տեղացի բնակիչներին ուղղված մանրամասն հարցումները՝ նրանց տներում ապրող կենդանիների վարքագծի առանձնահատկությունների մասին:

ՍՊԱՐՄԾ ԲՏԱԿ-Ի ուսումնական բաժնի վարիչ
երկրաբան-երկրաֆիզիկոս
Անուշ Ավանեսյան

Ջուրը կյանք է

Երկրի մակերեւույթի 75 տոկոսը ծածկված է ջրով: Մոլորակի ամբողջ ջրի 97.5 տոկոսը կենտրոնացված է օվկիանոսներում, եւ միայն 2.5 տոկոսն է պիտանի խմելու համար: Քաղցրահամ ջրերի 70 տոկոսը կուտակված է սառույցներում: Մնացած 30 տոկոսի մեծ մասն աղտոտված է, եւ միայն 1 տոկոսը կարելի է մաքուր համարել (Երկրի ամբողջ ջրի մոտ 0,007 տոկոսը պիտանի է մարդու կողմից «ուղղակի» օգտագործման՝ առանց նախնական մաքրման): Պիտանի ջրերի 70 տոկոսը ծախսվում է ոռոգման վրա, 22 տոկոսը վերցնում է արդյունաբերությունը եւ միայն 0.08 տոկոսն է օգտագործվում կենցաղում:



Փաստեր

- Աշխարհի երկրների մեծ մասում մեկ շնչին ընկնում է օրական 9,5 լ ջուր (համեմատության համար՝ միջին ամերիկացին օրական 80-100 լիտր ջուր է օգտագործում):
- 11.3 միլիարդ ԱՄՆ դոլար է անհրաժեշտ, Ասիայի եւ Աֆրիկայի զարգացող երկրների բնակիչներին ընդունելի որակի ջրով ապահովելու եւ կեղտաջրերի հեռացման աշխատանքները կազմակերպելու համար:
- դիարեայից մահացության դեպքերի 88 տոկոսը անորակ ջրի օգտագործման հետեւանք է (բացարձակ թվերով՝ մինչեւ հինգ տարեկան 1.9 միլիոն երեխաներից 1.5 միլիոնը մահանում է անորակ ջրի օգտագործման հետեւանքով): Այսինքն՝ բոլոր դեպքերի 18 տոկոսը բաժին է ընկնում անորակ ջրի օգտագործման հետեւանքներին (ամեն օր մահանում է 4000 երեխա:)
- զարգացած երկրների բնակիչները տարեկան 35 միլիարդ ԱՄՆ դոլար են ծախսում՝ շշերով ջուր գնելու վրա:
- ամեն տարի 2.7 տոննա պլաստմասա է ծախսվում պլաստիկ շշերի արտադրության վրա, որոնցում հետո ջուր է լցվում: Այդ պլաստմասայի 80 տոկոսը հայտնվում է շրջակա միջավայրում՝ հանգեցնելով կենդանի օրգանիզմների մահվան:

Աղեղների ռիսկի նվազեցման նոր ծրագիրը մեկնարկեց

2010 թ. հուլիսի 8-ին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, Օքսֆամ ՄԲ հայաստանյան մասնաճյուղը եւ UNICEF-ի հայաստանյան գրասենյակը հայտարարեցին Աղետների ռիսկի նվազեցման՝ Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության բաժնի ֆինանսավորմամբ իրականացվող տարածաշրջանային ծրագրի մեկնարկը:

Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության բաժնի Աղետների նախապատրաստման ծրագիրը Եվրամիության ծրագրերից է (DIPECHO), որն ուղղված է աղետներին նախապատրաստմանը, եւ ամբողջ աշխարհում ֆինանսավորում է ծրագրեր աղետավտանգ շրջաններում:

Հայաստանում DIPECHO ծրագրերի թիրախն են հանդիսանում Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի եւ Վայոց Ձորի մարզերը:

Գործողություններն իրականացվելու են 4 հիմնական ուղղություններով՝

1. աղետների ռիսկի նվազեցման քաղաքականության մեջ երեխաների կարիքների եւ իրավունքների արտացոլում, ինչպես նաեւ կրթության ազգային համատեքստում աղետների ռիսկերի կառավարման խնդիրների համակարգում,

2. համայնքների կարողությունների հզորացում,

3. դպրոցներում աղետներին նախապատրաստման վերաբերյալ ուսումնական ծրագրերի վերանայում, մշակում եւ անցկացում,

4. աղետների նվազեցման ոլորտում մարզային համակարգման հանձնաժողովի ստեղծում եւ համագործակցության հզորացում Հարավային Կովկասում:

- Հատուկ ուշադրություն ենք դարձնելու կանանց, երեխաներին ու հաշմանդամներին: Նաեւ ակնկալում ենք, որ ծրագիրը կնպաստի տեղական եւ մարզային իշխանությունների միջեւ համակարգման բարելավմանը, - ասաց Հայաստանում Եվրամիության պատվիրակության մամուլի եւ լրատվական բաժնի ղեկավար Օ. Սիմոնսը:

- UNICEF-ը փորձ ունի Կենտրոնական Ասիայի երկրներում նմանատիպ ծրագրերի իրականացման գործում, հույս ունենք, որ այդ փորձը մեզ կօգնի արդյունավետ աշխատել նաեւ Հայաստանում, - նշեց UNICEF-ի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Լ. Մոշիրի-Գիլանին:

- Ծրագիրն ուղղված է համայնքների կարողությունների ուժեղացմանը, բնակչության՝ հատկապես դպրոցահասակ երեխաների պաշտպանվածության եւ իրազեկման բարձրացմանը, - ասաց Հայկական Կարմիր խաչի ընկերության գլխավոր քարտուղար Ա. Եղիազարյանը:

- Կարծում եմ՝ ուժերը համախմբելով, մենք համայքներում կհասնենք ցանկալի արդյունքների,- նշեց ծրագիրն

իրականացնող մյուս կազմակերպության՝ Օքսֆամ ՄԲ հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Մ. Հակոբյանը:

Ծրագիրն իրականացնող կազմակերպությունները համագործակցում են Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության, Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի եւ Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության, ինչպես նաեւ Կրթության եւ գիտության նախարարության, մարզային իշխանությունների եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Անի Ստեփանյան

եղանակի տեսություն

Ավելի շոգ է լինելու

Արտակարգ իրավիճակների նախարարության «Հայպետհիդրոմետ» ծառայության օպերատիվ հիդրոօդերեւութաբանական կենտրոնի պետ Զարուհի Պետրոսյանը հայտնում է, որ այս օրերին բավական բարձր է ուլտրամանուշակագույն ճառագայթների ինդեքսը, այսինքն՝ կա արեւահարման վտանգ:

Նրա տեղեկացմամբ, վերջին երկու օրերին, ինչպես նաեւ այսօր, օդի առավելագույն ջերմաստիճանը, որը գրանցվել է Հայաստանում, 38,5 աստիճանն է: Այդ ջերմաստիճանը կպահպանվի մինչեւ ամսի 9-ը, իսկ դրանից հետո ջերմաստիճանը կհասնի 40-ի:

Նման ջերմաստիճան մեր հանրապետությունում նախկինում գրանցվել է 84 թ., 86 թ., 91 թ., իսկ վերջին անգամ 2006 թ. հուլիսի 17-ին էր, երբ օդի ջերմաստիճանը հասել էր 38-40 աստիճանի:

Զարուհի Պետրոսյանը կոչ արեց ազգաբնակչությանը խուճապի չմատնվել, պարզապես առավոտյան ժամը 11-ից մինչեւ ժամը 15-ը խուսափել արեւի ուղիղ ճառագայթների տակ մնալուց: Դրսում հարկավոր է կրել գլխարկ, հովանոց, ակնոցներ եւ բաց գույնի հագուստ:

Մասնագետը խորհուրդներ տվեց նաեւ սննդակարգի վերաբերյալ. «Սնունդը պետք է լինի թեթեւ, ընդհանրապես պետք է խուսափել ալկոհոլից, ինչպես նաեւ ֆիզիկական վարժություններից»:

ՄԱՐԶԵՐ		09.07		10.07		11.07		12.07		13.07	
		T⁰C	երև.	T⁰C	երև.	T⁰C	երև.	T⁰C	երև.	T⁰C	երև.
ՇԻՐԱԿ	գիշ.	+11...+16		+12..+17		+12..+17		+12..+17		+11..+16	
	ցեր.	+26...+31		+27...+32		+27...+32		+25...+30		+23...+28	
ԿՈՏԱՅՔ	գիշ.	+11...+16		+12..+17		+12..+17		+12..+17		+11..+16	
	ցեր.	+26...+31		+27...+32		+27...+32		+25...+30		+23...+28	
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	գիշ.	+11...+16		+12..+17		+12..+17		+12..+17		+11..+16	
	ցեր.	+26...+31		+27...+32		+27...+32		+25...+30		+23...+28	
ԼՈՌԻ	գիշ.	+13...+16		+15...+18		+15...+18		+15...+18		+12...+15	
	ցեր.	+26...+31		+27...+32		+27...+32		+25...+30		+23...+28	
ՏԱՎՈՒՇ	գիշ.	+15...+20		+18...+22		+18...+22		+18...+22		+15...+20	
	ցեր.	+32...+37		+33...+38		+33...+38		+31...+36		+29...+34	
ԱՐԱԳԱԾՈՏՆ՝ լեռ.	գիշ.	+11...+16		+12..+17		+12..+17		+12..+17		+11..+16	
	ցեր.	+26...+31		+27...+32		+27...+32		+25...+30		+23...+28	
ԱՐԱԳԱԾՈՏՆ՝ նախ	գիշ.	+20...+22		+21...+23		+21...+23		+21...+23		+19...+21	
	ցեր.	+36...+38		+37...+39		+37...+39		+35...+37		+32...+34	
ԱՐԱՐԱՏ	գիշ.	+20...+24		+21...+25		+21...+25		+21...+25		+20...+22	
	ցեր.	+37...+39		+38...+40		+38...+40		+36...+38		+33...+35	
ԱՐՄԱՎԻՐ	գիշ.	+20...+24		+21...+25		+21...+25		+21...+25		+20...+22	
	ցեր.	+37...+39		+38...+40		+38...+40		+36...+38		+33...+35	
ՎԱՅՈՑ ՁՈՐ՝ լեռ.	գիշ.	+11...+16		+12..+17		+12..+17		+12..+17		+11..+16	
	ցեր.	+26...+31		+27...+32		+27...+32		+25...+30		+23...+28	
ՎԱՅՈՑ ՁՈՐ՝ նախ	գիշ.	+20...+24		+21...+25		+21...+25		+21...+25		+20...+22	
	ցեր.	+37...+39		+38...+40		+38...+40		+36...+38		+33...+35	
ՍՅՈՒՆԻՔ՝ հով.	գիշ.	+20...+25		+21...+26		+21...+26		+21...+26		+19...+24	
	ցեր.	+33...+38		+35...+40		+35...+40		+33...+38		+31...+36	
ՍՅՈՒՆԻՔ՝ նախ	գիշ.	+12...+17		+13...+18		+13...+18		+13...+18		+11...+16	

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արարատյան դաշտում, Սյունիքի եւ Վայոց Ձորի հովիտներում ստեղծվել է բարձր կարգի հրդեհավտանգություն

Հուլիսի 9-ից 12-ը հանրապետության տարածքում սպասվում է առանց տեղումների եղանակ, 13-ին հյուսիսային շրջաններում երեկոյան ժամերին եւ գիշերվա առաջին կեսին սպասվում է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ, ամպրոպի ժամանակ քամու ուժգնացում՝ 12-17 մ/վրկ արագությամբ: Քամին՝ հարավարեւմտյան 2-7 մ/վրկ արագությամբ: Արարատյան դաշտում երեկոյան ժամերին ուժգնացում 12-17 մ/վրկ արագությամբ: Օդի ջերմաստիճանը հուլիսի 10-ին կբարձրանա 1-2, 12-ին եւ 13-ին կնվազի 3-5 աստիճանով:

Երեւանում սպասվում է առանց տեղումների եղանակ: Երեկոյան ժամերին՝ քամու ուժգնացում՝ 13-16 մ/վրկ:

	գիշեր 9.07	ցերեկ 9.07	երեկո 9.07	գիշեր 10.07	ցերեկ 10.07	երեկո 10.07	գիշեր 11.07	ցերեկ 11.07	երեկո 11.07	գիշեր 12.07	ցերեկ 12.07	երեկո 12.07	գիշեր 13.07	ցերեկ 13.07	երեկո 13.07
Երևույթ															
T ⁰C	+22 +24	+37 +39	+33 +35	+23 +25	+38 +40	+34 +36	+23 +25	+38 +40	+34 +36	+23 +25	+36 +38	+33 +35	+20 +22	+33 +35	+31 +33
Խոն. .%	68	29	48	66	30	50	62	28	49	62	25	48	61	24	45

Լեռների նենգությունը

Լեռներում փլուզումների, սողանքների եւ ձնահյուսերի դեպքերն ավելի հաճախ այս կամ այն բնական երեւույթի՝ երկրաշարժի, հրաբուխի ժայթքման, կլիմայի կտրուկ տաքացման հետեւանք են: Սակայն լինում է եւ այնպես, որ «լեռնային» աղետների պատճառ է դառնում մարդկանց գործունեությունը, ավելին, մի սովորական բղավոցն ու իր սովորական արձագանքը կարող են լուրջ աղետ առաջացնել:

Զոհվեցին նաեւ փղերը

Մ.թ.ա. 218 թվականին Կարթագենի զորավար Հաննիբալն իր զորքերով անցավ Ալպերը: Նրա նպատակակետը Հռոմն էր: Սակայն լեռներում Հաննիբալին դարանակալեց ահեղ բնությունը. ձնահյուսերի հետեւանքով զորավարը կորցրեց 18 հազար զինվոր, երկու հազար ձի եւ 37 փիղ:

Հռոմեացիները ջրի փակ

Պատմական փաստերով հաստատված առաջին խոշոր լեռնային փլուզումը տեղի է ունեցել այսօրվա Շվեյցարիայի տարածքում: 563 թվականին լեռնային ապարները ծածկեցին Ռոնայի ջրերի ճանապարհը՝ անմիջապես Ժնեւյան լճի առջեւ:

Սակայն գետը ջարդեց քարե ամբարտակը եւ հսկայական ալիքով թափվեց լճի մեջ՝ ամբողջովին ոչնչացնելով լճի ափին կանգնած հռոմեական փոքրիկ քաղաքը: Ավելի քան երկու հազար մարդ զոհ գնաց Ռոնայի ջրերին:

«Կրիան» ընկավ հովիտը

Հնդկացիները միշտ խուսափել են բնակվել Կանադայի Ալբերտ նահանգում գտնվող Կրիայի լեռան ստորոտներում: Իսկ ահա սպիտակամորթները լեռան մերձակայքում կառուցեցին Ֆրանք քաղաքը եւ այնտեղ ածուխի հանքահորեր փորեցին: Իր անվանումը լեռն ստացել էր կրիայի պատյանի նմանվող երկակի գագաթի եւ մոտ 900 մետրով առաջ դուրս եկած կրիայի «գլխի», իսկ իրականում՝ կրաքարի բեկորի շնորհիվ:

1903 թվականի ապրիլի 29-ի վաղ առավոտյան քաղաքի բնակիչները տարօրինակ սուլոցի ձայն լսեցին: Լեռան արեւելյան կողմից կոտրվում-ընկնում է կրիայի «գլուխը» եւ գլորվում դեպի ստորոտ: Երկու րոպեի ընթացքում մեծ արագությամբ շարժվող լեռնային ապարները ոչնչացնում են ճանապարհին հանդիպած ամեն ինչ: Քարերի հեղեղը փակում է հանքահորի մուտքը, որտեղ գտնվում էր 17 բանվոր, քշումտանում է հանքափորների տները: Երկաթգծերը մնում են լեռնային բեկորների երեսուն մետրանոց շերտի տակ: Համանման վիճակում էր նաեւ քաղաքի հարավային հատվածը:

Պաշտոնական տվյալներով լեռնային փլուզման հետեւանքով զոհվեց քաղաքի 70 բնակիչ: Սակայն զոհերի հստակ թիվը մինչ այսօր հայտնի չէ, քանի որ շատերն այդպես էլ մնացին անհետ կորածների ցուցակում:

Նոր լիճ՝ փլուզման հետեւանքով

1911 թվականին Պամիրի մերձակայքում տեղի ունեցած լեռնային փլուզման ժամանակ քարերն ամբողջությամբ ծածկեցին ընդամենը 54 բնակիչ ունեցող Ուսոյ գյուղը: Քարե զանգվածները Մուրգաբ գետի վրա առաջացրեցին բնական ամբարտակ, ինչի արդյունքում ձեւավորվեց 53 կիլոմետր երկարությամբ եւ 284 մետր խորությամբ մի նոր լիճ:

Ձնե զենք

Առաջին աշխարհամարտի ժամանակ (1914-1918 թթ.) ձյան փլուզումների հետեւանքով Ալպերում զոհվել է ավելի քան քառասուն հազար ավստրիացի

եւ իտալացի զինվոր: Հաճախ հակամարտող կողմերն իրենք էին թնդանոթների օգնությամբ լեռներում փլուզումներ առաջացնում: Հայտնի է մի դեպք, երբ նման զենքով հակառակորդը երկու օրվա ընթացքում ոչնչացրեց երեք հազար ավստրիացի զինվորի:

Մահացան քնի մեջ

1970 թվականի փետրվարի 10-ին ֆրանսիական Վալ դե Իզեր դահուկային հանգստավայրում երեքհարկանի հյուրանոցի վրա թափվեց հսկայական ձնահյուս: Սպիտակ տարերքը խլեց խաղաղ քնած 39 զբոսաշրջիկի կյանք: Ընդհանրապես այդ տարին նշանավորվեց լեռներում տեղի ունեցած սարսափելի աղետներով: Միայն փետրվար ամսվա ընթացքում Ալպերում ձնահյուսերի զոհ դարձավ հարյուր հանգստացող:

Ահեղ Ուասկարանը

Անդերում է գտնվում Կալյեխոն դե Ուայլաս գեղատեսիլ հովիտը, որը երկու կողմից շրջապատված է լեռնաշղթաներով: Բարակ կանաչ ժապավենով հովիտն անցնում է Կորդի լեռների Սեւ եւ Սպիտակ լեռնաշղթաների միջով: Դրանց շարքում առանձնանում է վսեմաշուք Ուասկարանը (6768 մետր), որի զառիվայր լանջերը պատված են սառույցներով:

1975 թվականին Պերուի կառավարությունը որոշեց Սպիտակ լեռնաշղթան եւ դրա մերձակա տարածքը հայտարարվեցին պետական արգելավայր: Այսպես ձեւավորվեց Ուասկարան ազգային այգին, որտեղ ամեն ինչ առանձնահատուկ է. 15 մետրի հասնող Ռայմոնդի խոտատեսակը, որ հանդիպում է միայն Կենտրոնական Անդերում, այն էլ շատ հազվագյուտ վայրերում, կենյուա ծառը եւ այլն: Սակայն, հիանալով Անդերի գեղեցկությամբ, պետք չէ մոռանալ, թե որքան ահեղ կարող է լինել Ուասկարանը՝ սպիտակաթույր երկգագաթ լեռը:

Պերուն հաճախ է տուժում երկրաշարժերից: Սակայն դրանցից ոչ մեկը չի ուղեկցվել այնքան սարսափելի հետեւանքներով, որքան 1970 թվականի մայիսի 31-ին տեղի ունեցած աղետը: Կիրակի էր, նոր էր ավարտվել ֆուտբոլի աշխարհի առաջնության՝ Մեքսիկայի եւ Խորհրդային Միության թիմերի միջեւ կայացած առաջին հանդիպումը, եւ ֆուտբոլասերները դեռ քննարկում էին խաղի արդյունքները:

Մարդիկ վաղուց գիտեին, որ հովիտը շատ վտանգավոր է: 1962 թվականին լեռան լանջերից իջած ձյան եւ քարերի զանգվածը հովտում սպանեց 350 մարդու: Սակայն մարդիկ հարմարվել էին Ուասկարանի վտանգին եւ շարունակում էին ապրել հովտում:

Այդ մայիսյան պայծառ օրը, ժամը չորսի սահմաններում, նախ լսվեց հեռավոր աղմուկ, հետո հանկարծ գետինը դողդաց եւ սկսեց տեղաշարժվել՝ առաջացնելով մեծ ճեղքեր: Ստորգետնյա ցնցումները փլուզում էին տները, ալիքաձեւ բարձրացնում եւ նորից իջեցնում հողը: Տասնյակ տարիների ընթացքում երկնակեղեւում կուտակված էներգիան մոլեգնեց ընդամենը մի քանի րոպե: Սակայն դժբախտության եւ տառապանքի աղբյուր դարձած րոպեները ոչնչացրին այն ամենն, ինչ ստեղծել էին միլիոնավոր մարդիկ:

Երկրաշարժի էպիկենտրոնը գտնվում էր Խաղաղ օվկիանոսում՝ Ուասկարանից մոտ 130 կիլոմետր հեռավորության վրա, բայց ցնցումները տեղաշարժեցին լեռան լանջերի սառույցներն ու ապարները: Առաջին րոպեների ընթացքում Ուասկարանից պոկվեց եւ ճեպընթաց գնացքի արագությամբ ցած նետվեց ժայռի հսկայական մի բեկոր՝ իր հետ տանելով քարերի, հողի, սառույցի եւ ձյան զանգվածներ: Գիտնականների ենթադրությամբ՝ ավելի քան 100 միլիոն խորանարդ մետր ծավալով քարե «հեղեղը» շարժվում էր մոտ հազար կմ/ժ արագությամբ: Հովտի վրա թափված ժայռերից ամենամեծը 65 տոննա քաշ ուներ:

Հասնելով Ռիո Սանտա գետի հովիտ՝ քարերն ամբողջությամբ ծածկեցին Ռանրագիրկ փոքրիկ քաղաքը: Ուշ էր փրկություն փնտրել, ընդամենը մի քանի մարդու հաջողվեց բարձրանալ բլուրների վրա եւ կենդանի մնալ: Քարերի հոսքի արագությունը նվազեց մինչեւ 25 կիլոմետր, այնուհետեւ կանգ առավ: Սակայն քարե զանգվածի մի մասն անցավ լեռներից մեկի վրայով եւ քշեց-տարավ Յունգայ քաղաքը:

Յունգայը Ուասկարանի ստորոտում գտնվող 25 հազար բնակչությամբ խոշոր տուրիստական կենտրոն էր: Եվ ընդամենը հինգ րոպեի ընթացքում քաղաքն անհետացավ: Ցեխի եւ քարերի տասը մետրանոց շերտը ծածկեց Յունգայը եւ նրա տեղում մնաց ծխացող ցեխաջրի ծով:

Սելավը փլուզեց եւ օվկիանոս քշեց մի քանի ավան: Այսօր, ավելի քան երեսուն տարի անց, հովիտն ունի նույն տեսքն, ինչ աղետից հետո: Ուասկարանի՝ նախկինում ծաղկուն կանաչ հովտում հանդիպում են միայն երկհարկանի շենքերի բարձրության քարեր, արմատախիլ արված դարավոր ծառեր, հողը դարձել է անկենդան, արեւից ճաքճքած, մոխրագույն ցեխի շերտ:

Ինչպես եւ Յունգայը, գետնի տակ անցան Կախակայ եւ Կասմա քաղաքները: Մոտ 70-90 տոկոսով ավերվեցին Ուարաս, Ռոմաբամբա, Չիմբոտե եւ Ուարմեյ նավահանգիստները:

Պերուում հայտարարվեց ութօրյա սուգ: Աղետը խլեց 70 հազար մարդու կյանք, 150 հազարը ստացան վնասվածքներ, 800 հազար մարդ մնաց անօթեւան, 20 հազարը մինչեւ այսօր համարվում են անհետ կորած:

հոգեբանի սենյակ

Դրական մտածողությունը դրական է դարձնում կյանքը

Միտք... Ինչ ազդեցություն կամ դեր կարող է ունենալ միտքը մարդու անձի եւ, առավել եւս, նրա կյանքի ձեւավորման վրա: Մեր մտքերը բավական մեծ ուժ եւ էներգիա ունեցող երեւույթներ են, որոնք, անկասկած, ազդում են մեր մարմնի, օրգանիզմի ու կյանքի վրա: Ինչպիսին մեր մտքերն են, այնպիսին էլ մեր կյանքի բովանդակությունն է:

Մտածողությունը հոգեկան մի գործընթաց է, որը դրսեւորվում է դրական կամ բացասական ձեւերով: Այսինքն՝ մարդու ուղեղում պտտվում են եւ՛ դրական, եւ՛ բացասական բովանդակությամբ մտքեր, ու կախված նրանից, թե այդ մտքերից որոնք են գերակայում, դրան համապատասխան էլ դասավորվում է մեր վերաբերմունքը կյանքի նկատմամբ:

Դրական մտածողությունը մեծ ազդեցություն ունի մարդու օրգանիզմի վրա, որի ապացույցն ենք հենց մենք, երբ լավ նորություն ենք լսում: Լավ լուր լսելիս մենք ուրախանում ենք, մեր մարմինը կարծես կենդանանում է, էներգիայի մեծ հոսք ենք ստանում, եւ ուրախությունն ու հրճվանքն ամրացնում են մեր օրգանիզմի իմունային համակարգը: Իսկ վատ լուր լսելիս մեր օրգանիզմը սթրես է տանում, առաջանում է լարվածություն, իսկ որոշ ժամանակ անց հոգնածություն ու թուլություն ենք զգում, մեր ուժերը սպառվում են ու դառնում ենք խոցելի: Այս ամենն իրականանում է գլխուղեղի գրգռվածության հետեւանքով: Արդեն 20-30 տարի է, ինչ ուսումնասիրություններ են կատարվում, որոնք վկայում են, որ կյանքի նկատմամբ լավատեսական, դրական տրամադրվածությունը նպաստում է օրգանիզմի առողջացմանն ու լավացմանը: Գիտնականները հաստատում են , որ դրական մտքերը եւ հույզերը մարդուն ուժ են տալիս սթրեսի հետեւանքներից խուսափելու համար:

Բավարար է միայն դրական մտածողությունը

Մարդը ոչ միայն մարմին ունի, այլեւ մտքեր, հույզեր: Բացի դրանից, նա գտնվում է այլ մարդկանց հետ միջանձնային փոխհարաբերությունների մեջ: Դժվար է լավ զգալ, եթե ուղեղում պտտվում են միայն բացասական եւ վատ մտքեր: Երբ մենք դրական բաներ ենք մտածում, ուղեղի ձախ կիսագնդում միաժամանակ գրգռվում են երկու օջախներ. մեկն ուղեղի կեղեւի առաջամասն է, որն էլ դրական միտքը վերածում է դրական հույզի: Ձախ կիսագնդի ազդեցության հետեւանքով ակտիվանում է նաեւ պարասիմպատիկ նյարդային համակարգը, որն էլ արտադրում է սերոտոնին հորմոնը՝ ուրախության եւ երջանկության հորմոնը: Այս ամենի արդյունքում մարմինը լիցքաթափվում է, ակտիվանում են վերականգնող համակարգերը եւ ամրանում է իմունային համակարգը:

Դրական մտածել եւ խոսելը մեծ ներուժ եւ էներգիա է պահանջում, եւ որպեսզի մեր օրգանիզմը ցանկանա այդպես գործել, մարդը պետք է օգնի օրգանիզմին, դրդի դրական գործելուն:

Դրական մտածողությունն ընթանում է երեք հիմնական ուղղություններով.

1. Դրական հաստատում. այն է, թե մարդն ինչ է ցանկանում ունենալ՝ ինչպիսի որակներ, հատկություններ, հարաբերություններ եւ այլն: Այդ հաստատումն ուղղված է ապագային, որը կարող է դրսեւորվել հետեւյալ կերպ «Օրեցօր ես ինձ ավելի լավ եմ զգում բոլոր հարաբերություններում», «Օրեցօր ես ավելի հաջողակ եմ դառնում», «Օրեցօր իմ գործերն ավելի են լավանում» եւ այսպես շարունակ: Ամեն օր, նմանատիպ մտքերով մեր առավոտը լցնելով, մենք դեպի մեզ ենք ձգում դրական էներգիան: Մենք մեր մտքի ուժի եւ էներգիայի միջոցով մեզ նախապատրաստում ենք ապագայում մեզ սպասվող ցանկալի փոփոխություններին:

2. Դրական տրամադրվածություն. ներքին ինքնակառավարումն է կամ հավատը, որ ամեն ինչ լավ է լինելու: Այն արտահայտվում է այսպես. «Ես կարող եմ», «Ամեն ինչ կստացվի», «Ես դա կանեմ» եւ այլն: «Եթե ոչ ես, ապա էլ ով». սա դրական տրամադրվածության կարգախոսն է: Այս մոտեցումը մեզ հնարավորություն է տալիս ձեռք բերելու ինքնավստահություն մեր ուժերի եւ կարողությունների նկատմամբ, որոնք էլ ազդում են նպատակների արդյունավետ իրականացմանը: Դրական տրամադրվածությունը կախված է մարդու տեսակից, օրինակ՝ վատատեսի համար ափսեի կոտրվելը կարող է վատ նշան լինել, իսկ լավատեսը դրա մեջ ոչ մի վատ բան չի տեսնում, միգուցե ափսեի կոտրվելը լավ նշան է:

3. Դրական մտածողություն. սա իրադարձությունները եւ գործողությունները դրական ընթացքին դրդելն է: Անցկացնենք մի թեսթ. պատկերացրեք մի բաժակ, որը կիսով չափ լցված է ջրով: Ինչպե՞ս կնկարագրեք բաժակը... Որպես կանոն, լավատեսը պատասխանում է, որ բաժակը կիսով չափ լիքն է, իսկ վատատեսը՝ կիսով չափ դատարկ է: Իհարկե, այս թեսթը չափանիշ չէ, բայց այն միանշանակ բնութագրում է մարդու մտածողությունը, այսինքն՝ մարդը դրակա՞ն է տրամադրված, թե՞ բացասական:

Դրական մտածողությունը սովորեցնում է մարդուն սիրել եւ՛ իրեն, եւ՛ դիմացինին: Դրական մտածողությունն օգնում է մարդուն հեշտ ապրել, հեշտությամբ լուծումներ գտնել կյանքում, հեշտությամբ կողմնորոշվել իրավիճակում եւ իրեն շրջապատել դրական աուրայով: Ինչքան մարդը դրական է մտածում, այնքան դրականն ավելանում է իր կյանքում, քանի որ գոյություն ունի տիեզերքի ձգողության օրենք, որը պարգեւատրում է մարդուն նրանով, ինչ նա մտածում է եւ տարածում է իր շուրջը: Դրական մտածել նշանակում է նկատել նաեւ սեփական անձի դրական եւ ուժեղ կողմերը, գնահատել եւ արժեւորել այն, ինչ ունես: Երբ մարդը գնահատում է իր դրական կողմերը, ապա դրանք շատանում են, իսկ թերությունները՝ քչանում:

Հիշե՛ք. յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում, ըստ իր մտածողության, լինել երջանի՞կ, թե՞ դժբախտ: Մտածե՛ք, միգուցե ժամանակն է փոխելու ձեր վերաբերմունքը ձեր եւ կյանքի հանդեպ:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

առաջին օգնություն

Հայաստանում ամռան շոգ ու տապ օրերին, երբ ջերմաստիճանը հասնում է մինչեւ 40 աստիճան եւ ավելի, հաճախ են հանդիպում բարձր ջերմաստիճանի գերազդեցության հետեւանքով առաջացած ջերմային խանգարումներ: Ցավոք, փորձը ցույց է տալիս, որ մեծ մասամբ անտեղյակ ենք, թե ինչպես պետք է վարվել այդ դեպքում, ինչ պետք է անել:

Մարդու մարմնի նորմալ ջերմաստիճանը 36,6^{O}C է, որի կայունությունն ապահովվում է ջերմակարգավորման համակարգի միջոցով: Հենց այդ համակարգի նորմալ գործունեության արդյունքում է, որ մարդու մարմինը կարողանում է դիմակայել արտաքին միջավայրի ջերմաստիճանի բավական մեծ տատանումներին: Սակայն բարձր ջերմաստիճանի երկարատեւ ազդեցության հետեւանքով մարմնի ջերմակարգավորման համակարգը կարող է խաթարվել՝ հանգեցնելով տարբեր հիվանդագին վիճակների, ինչպիսիք են՝ արեւահարությունը, ջերմային հյուծումը:

Կան որոշակի գործոններ, որոնք ազդում են մարմնի ջերմակարգավորման վրա: Դրանք են՝ ջրազրկումը, թերսնումը, վնասվածքների առկայությունը, առողջական վիճակը, տարիքը, ինչպես նաեւ տարած ջերմային խանգարումների նախադեպերը:

Արեւահարություն

Արեւահարությունը հիվանդագին վիճակ է, որն առաջանում է գլխի վրա արեւի ճառագայթների անմիջական եւ երկարատեւ ազդեցության հետեւանքով: Պետք է նշել, որ մանկահասակ երեխաներն ավելի խոցելի են արեւի ճառագայթների անմիջական ազդեցության նկատմամբ, քանի որ նրանց գանգի ոսկրերը բարակ են, մաշկն ու մազերը՝ նուրբ:

Ինչի վրա ուշադրություն դարձնել

Արեւահարության նշանները կարող են ի հայտ գալ ինչպես անմիջապես հետո, այնպես էլ արեւի ճառագայթների ներգործությունից մի քանի ժամ անց: Արեւահարման ժամանակ տուժածի մարմնի ջերմաստիճանը բարձրանում է մինչեւ 39 աստիճան եւ ավելի, դեմքի եւ պարանոցի մաշկը լինում է կարմրած ու չոր: Տուժածը գանգատվում է գլխացավից, գլխապտույտից, թուլությունից: Նա կարող է ականջներում աղմուկ զգալ, ունենալ սրտխառնոց, փսխում, արյունահոսություն քթից, հնարավոր են գիտակցության խանգարումներ եւ կորուստ: Արեւահարությունը շատ լուրջ իրավիճակ է: Դա կարող է մարդու կյանքին անմիջական վտանգ սպառնալ: Երբեք անուշադրության մի՛ մատնեք այս վիճակը, անհապաղ սկսեք ցույց տալ առաջին օգնություն եւ դիմեք բժշկի:

Ինչ անել

Երբ մարդու մոտ նկատում եք արեւահարության նշաններ, ապա նրան անմիջապես տեղափոխեք հով, ստվերոտ վայր, օգնեք հարմար դիրք ընդունել: Արձակեք ճնշող կապերը, թեթեւացրեք հագուստը: Տուժածի գլխին դրեք սառը թրջոցներ, ծածկեք նրան խոնավ սավանով: Եթե տուժածը գիտակցությունը չի կորցրել՝ տվեք խմելու սառը, քաղցր հեղուկներ:

Եկեք վերհիշենք, որ քթից արյունահոսության դեպքում տուժածի գլուխը պետք է առաջ թեքել, որ արյունը շնչուղիների խցանման պատճառ չդառնա: Եթե մարմնի ջերմաստիճանը հասնում է 39-ի եւ դրանից բարձր կամ տուժածն ունի գիտակցության խանգարումներ՝ անհապաղ ահազանգեք շտապօգնություն: Մինչեւ մասնագիտական օգնության ժամանումը վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները:

Ջերմային հյուծում

Հիմա եկեք անդրադառնանք ջերմային մյուս խանգարմանը՝ ջերմային հյուծմանը: Ջերմային հյուծումը շոկի մի տեսակ է, որը զարգանում է առատ քրտնարտադրության հետեւանքով մարմնի ջրազրկումից:

Տաք միջավայրում գտնվելու ընթացքում քրտնարտադրությունն ուժեղանում է, որի հետեւանքով տուժածը մեծ քանակով հեղուկ եւ աղեր է կորցնում (շոգ օրվա ընթացքում մարդը կարող է կորցնել մինչեւ 10 լիտր հեղուկ): Այս կորուստը բերում է շրջանառող արյան ծավալի նվազեցման: Արդյունքում ամբողջ մարմնի արյունամատակարարումը խանգարվում է: Զարգանում է շոկային իրավիճակ՝ ջերմային հյուծում:

Ինչի վրա ուշադրություն դարձնել

Ջերմային հյուծումով տուժածի մաշկը գունատ է, խոնավ, սառը: Նա գանգատվում է գլխացավից, գլխապտույտից, ծարավի զգացումից: Տուժածը լինում է թույլ, ունենում է սրտխառնոց, փսխում: Նրա անոթազարկն ու շնչառությունը հաճախացած են: Փաստորեն նկատվում են այն բոլոր նշանները, որոնք բնորոշ են շոկին: Հնարավոր է, որ տուժածի մարմնի ջերմաստիճանը լինի նորմալ կամ սովորականից մի փոքր բարձր կամ ցածր:

Ինչ անել

Հանդիպելով նման վիճակում գտնվող տուժածի՝ խորհուրդ տվեք դադարեցնել աշխատանքն ու անմիջապես տեղափոխեք նրան հով, ստվերոտ վայր: Պառկեցրեք, բարձրացրեք ոտքերը մոտ 20-30 սմ: Թուլացրեք ճնշող կապերը եւ թեթեւացրեք հագուստը: Եթե տուժածը գիտակցությունը չի կորցրել, տվեք խմելու սառը հանքային ջրեր կամ ջրազրկման ժամանակ տրվող հեղուկից:

Անհապաղ ահազանգեք շտապօգնություն եւ մինչեւ մասնագիտական օգնության ժամանումը վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները:

Կանխարգելում

Սովորաբար բարձր ջերմաստիճանից առաջացած արտակարգ իրավիճակները հնարավոր է կանխել՝ հետեւելով ստորեւ բերված խորհուրդներին:

Ամռանը, շոգ եղանակին խմեք շատ հեղուկներ՝ օրը 2-3 լիտրի չափ: Ցանկալի է օգտագործել հանքային ջրեր, հյութեր:

Արեւի տակ գտնվելիս պաշտպանեք գլուխը՝ դնելով գլխարկ կամ պահեք հովանոց: Շոգ եղանակին, հնարավորության դեպքում, հագեք բաց գույնի բամբակյա հագուստ: Խուսափեք օրվա ամենաշոգ եւ արեւի բարձր ակտիվության ժամերին՝ 12-ից 15-ը, դուրս գալուց:

Ամռանը դրսում աշխատելիս ծրագրավորեք ձեր աշխատանքը վաղ առավոտյան կամ երեկոյան ժամերին, երբ արեւի ակտիվությունն այնքան էլ բարձր չէ: Հաճախակի ընդմիջումներ կատարեք: Դա թույլ կտա դիմակայել բարձր ջերմաստիճանի կարճատեւ ազդեցությանը:

Ֆուտբոլային արտակարգ պատահար

Երկրագնդի համարյա ամբողջ բնակչությունն ականատես եղավ, թե ինչպես ֆուտբոլի աշխարհի առաջնության 2006 թ. եզրափակիչ խաղի ընթացքում աշխարհի ամենահայտնի ֆուտբոլիստներից մեկը՝ Զինեդին Զիդանը գլխով հարվածեց Իտալիայի ազգային հավաքականի խաղացող Մարկո Մատերացիի կրծքին: Շատերի համար Զիդանի պահվածքն առավել քան տարօրինակ էր, քանի որ ֆուտբոլիստը հայտնի է իր զսպվածությամբ եւ խաղի ընթացքում ցուցաբերած ազնիվ ժեստերով, սակայն փաստը մնում է փաստ՝ Մատերացիի ինչ-որ խոսքից հետո նա հանկարծակի շրջվեց ու գլխով ուժեղ հարվածեց իտալացու կրծքավանդակին, որից հետո, ստանալով կարմիր քարտ, հեռացվեց դաշտից: Սա ալժիրյան ծագմամբ ֆրանսիացու 20-ամյա մարզական կարիերայի վերջին խաղն էր ֆուտբոլում, եւ շատ երկրպագուներ նրանից սպասում էին համարյա անհնարինը, իսկ Զիդանը մարզադաշտը լքեց խաղի վերջին, ավելի հստակ՝ 109-րդ րոպեին՝ իր թիմակիցներին այդ վճռորոշ պահին թողնելով փոքրամասնության մեջ: Այնուամենայնիվ, ինչ էր տեղի ունեցել Զիդանի եւ Մատերացիի միջեւ:

Տարբերակ 1. Ահաբեկիչ

Ֆրանսիական հեռուստաալիքներից մեկի համաձայն՝ իտալացին Զիդանին անվանել է ահաբեկիչ եւ հիշեցրել նրա քաբիլյան արմատների մասին: Անգլիական հրատարակություններից մեկը ճշտում է. «Արաբ ահաբեկիչ»:

Բանն այն է, որ Ֆրանսիայի ազգային հավաքականի ավագի հայրը ծագումով Ալժիրի ազգային փոքրամասնություն կազմող քաբիլների ներկայացուցիչ է: Նախքան արաբների կողմից Մաղրիբի նվաճումը, քաբիլները բնակվել են այնտեղ, իսկ ֆրանսիացիների կողմից գաղութացվելու տարիներին նրանք մշտապես ճնշումների են ենթարկվել: 70-80-ական թթ. իրենց իրավունքների համար պայքարելու՝ քաբիլների փորձերը դաժանորեն ճնշվել են:

Ազգային հողի վրա արված վիրավորանքները եւ՛ Ալժիրում, եւ՛ Ֆրանսիայում շատ լուրջ են ընդունվում: Այդ պատճառով Զիդանի պահվածքը տարօրինակ չէ: Քաբիլները ռազմատենչ ժողովուրդ են եւ պատկանում են մահմեդականության սուննի աղանդին: Ըստ ամենայնի՝ ֆրանսիացի կիսապաշտպանն աստվածավախ մարդ է:

Ինքը՝ Մատերացին այս մեղադրանքը վճռականորեն հերքում է: «Դա ճիշտ չէ, ես նման բան չեմ ասել: Ես այնքան տգետ եմ, որ նույնիսկ չգիտեմ, թե ինչ է նշանակում այդ բառը», - հայտարարել է իտալացի պաշտպանը Հռոմի օդանավակայանում:

Տարբերակ 2. Անձնական

Իտալական մարզական կայքերից մեկը, հղում կատարելով բրազիլական «Գլոբո» հեռուստաընկերությանը, հայտնում է, որ

Մատերացիի հասցրած վիրավորանքն անձնական բնույթ է ունեցել: Իբր իտալացին Զիդանի կրտսեր քրոջը՝ Լիլիին երկու անգամ մարմնավաճառ է անվանել:

Բրազիլիայում դիմել են խուլերի օգնությանը, որպեսզի նրանք Մատերացիի շրթունքների շարժումներով վերծանեն նրա խոսքերը: Ֆուտբոլիստն իբր ասել է. «Ոչ թե Մարիամ Մագքաղինացին էր աշխատում փողոցում, այլ քո ամենամոտ ազգականուհին»: Բայց ո՞վ. մա՞յրը, քո՞յրը, իսկ միգուցե կի՞նը: Այստեղ կարծիքները բաժանվում են, սակայն քաջատեղյակ աղբյուրները հավաստում են, որ նման պահվածքը ֆուտբոլիստների համար սովորական երեւույթ է եւ անհավատալի է, որ երկարամյա փորձ ունեցող Զիդանը կարող էր այդ խոսքերից վիրավորվել:

Իտալական կայքի սեփական տարբերակի համաձայն՝ Մարկոն Զիդանին ասել է. «Կեղտոտ մահմեդական», իսկ այն, որ մահմեդականները կրոնական հարցերի նկատմամբ շատ խանդոտ վերաբերմունք ունեն, հայտնի է բոլորին:

Իտալական մամուլում շրջանառվում է եւս մեկ վարկած: Շրթունքների շարժումներով խոսքերը վերծանող մասնագետների կարծիքով Մատերացին իբր ասել է. «Թող քո ամբողջ ընտանիքը մահանա սարսափելի եւ դաժան մահով»:

Անգլիացիները, նույնպես դիմելով վերոնշյալ մասնագետների ու իտալերենի թարգմանչի օգնությանը, իտալացի պաշտպանի բառերը վերծանել են որպես «ահաբեկչական մարմնավաճառի որդի»՝ ավելացրած հայտնի ու «սիրված» հայհոյանքներից մեկը, որը հասկանալի պատճառով չենք կարող տպագրել:

Ամենաանհեթեթ տարբերակներից մեկն էլ այն է, որ Իտալիայի ազգային հավաքականի ֆուտբոլիստը Զիդանին հարցրել է, թե արդյո՞ք նա չի ցանկանա խաղալ «Ինտերի» կազմում:

Միջադեպից մի քանի ժամ հետո լուրերում տեղեկություններ են հայտնվում այն մասին, որ Զիդանի մտերիմ ընկեր եւ Իտալիայի հավաքականի դարպասապահ Ջանլուիջի Բուֆֆոնը հայտարարել է, թե այլեւս չի ցանկանում խաղալ Մատերացիի հետ միեւնույն թիմի կազմում:

Մարկոյի հայրն իր հերթին պնդում է, որ Զիդանն ինքն է հրահրել այդ միջադեպը:

Տարբերակ 3. Մատերացիի տարբերակը

Ավելի ուշ իտալական թերթերից մեկին տված հարցազրույցում Մարկոն բացել է գաղտնիության վարագույրը: «Զիդանն իրեն շատ վատ էր պահում, եւ ես նրան վիրավորեցի: Ես ընդամենը մի քանի ակնթարթ քաշեցի նրա վերնաշապիկից, ինչին ի պատասխան՝ նա շրջվեց եւ բացահայտ հեգնանքով ու քմծիծաղով ասաց. «Եթե քեզ պետք է իմ վերնաշապիկը, ապա ես այն քեզ կտամ ավելի ուշ, երբ մենք .... ձեզ տուգանային հարվածներով»: Դրանից հետո ես նրան վիրավորեցի, սակայն նման արտահայտություններ ֆուտբոլիստները խաղի ընթացքում լսում են տասնյակ անգամներ»:

Զիդանն առայժմ խորհրդավոր լռություն է պահպանում, ինչը մի կողմից ակամա ցույց է տալիս, որ նա էլ «մի բարի պտուղը չի»: Նրա գործակալը խոստացել է, որ մոտ ապագայում ֆրանսիացի կիսապաշտպանը կպատմի, թե իրականում ինչ է տեղի ունեցել 2006 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնության եզրափակիչ խաղում:

Գոհար Բաղդասարյան

Տեսողական ընկալումն անգիտակցաբար փոխվում է բույրերի ազդեցության տակ

Չինաստանի ակադեմիայի հոգեբանության ինստիտուտի պրոֆեսոր Չժոու Վենը՝ իր չինացի եւ ամերիկացի գործընկերների հետ փորձարկումներ է իրականացրել մարդու տեսողական օրգանի մինչ այժմ անհայտ հատկությունները պարզելու համար: Եթե մի աչքի ցանցաթաղանթին մի պատկեր պրոյեկտվի, իսկ մյուսին՝ մեկ ուրիշը, ուղեղում դրանք սկսում են մրցակցել: Եվ մարդը հերթով տեսնում է մերթ մեկը, մերթ՝ մյուսը:

Հետազոտողներն իրար վրա են դրել կարմիր վարդի եւ երկու կանաչ ֆլոմաստերի պատկերները, եւ փորձարկվողները դրանց նայել են կարմրականաչ անագլաֆիկ ակնոցների միջով, որոնք օգտագործվում են ստերեոպատկերներ դիտելիս;

Կարմիր պլաստիկը ֆիլտրում է միայն կարմիր պատկերը, իսկ կանաչը՝ միայն կանաչը: Արդյունքում մարդը տարբեր աչքերով տեսնում է առարկաների միախառնված ուրվագծերը, ստացվում է մեկ ընդհանուր պատկեր: Տվյալ դեպքում աջ եւ ձախ աչքերը լրիվ տարբեր պատկերներ էին տեսնում, այդ պատճառով էլ փորձարկվողը մեկ հստակ տեսնում էր վարդը, մեկ՝ ֆլոմաստերները: Տվյալ պահին հստակ երեւացող պատկերի դեպքում նա պետք է համապատասխան կոճակ սեղմեր:

Տեսողական խաբկանք՝ հոտառության միջոցով

Այն բանից հետո, երբ 38 փորձարկվողները մարզվեցին ակնոցներով, սկսվեց առաջին փորձարկումը, որին մասնակցում էր 12-ը: Մասնակիցները ոչ միայն առարկաներին էին նայում ակնոցների միջով, այլեւ բույրեր

էին զգում, որոնք քթին էին հասնում հատուկ խողովակներով: Առաջին հոտը վարդի հոտն էր, իսկ երկրորդը նման էր ֆլոմաստերի թանաքի հոտին:

Հոտերն ու պատկերները հաջորդում էին միմյանց: Պարզվեց, որ վարդի հոտը մեծացնում է այն ժամանակը, որի ընթացքում փորձարկվողները վարդ են տեսնում, իսկ բութանոլի հոտի դեպքում ավելի երկար երեւում է ֆլոմաստերը: Այսինքն՝ հոտային խթանները փոխում են տեսողական խթանների ընկալումը:

Երեւակայության խաղ չէ

Նման արդյունք ստանալով՝ գիտնականները հարցի առաջ կանգնեցին. իրակա՞ն է, արդյոք, իրենց հայտնաբերած կապը, թե՞ փորձարկվողները հասկացել են փորձի էությունը եւ ակամա գիտնականների ցանկացած արդյունքն են ցույց տվել: Երկրորդ փորձը, որն անցկացվել է մյուս 12 մասնակիցների հետ, անցել է նույն կերպ, բացառությամբ, որ հոտերը մտացածին են եղել: Սովորական ջրի մի սրվակը ներկայացվել է որպես վարդի օշարակ, իսկ մյուսը՝ ֆլոմաստերի թանաք: Փորձարկվողները հավատացել են եւ նույնիսկ ասել, որ զգում են հոտերը, բայց փորձը հակառակն է ապացուցել: Երեւակայական հոտը չի փոխել այն ժամանակը, որի ընթացքում մարդիկ տեսնում էին վարդն ու ֆլոմաստերները:

Այլ առարկաներով՝ նույն արդյունքը

Վերջապես լրացուցիչ փորձարկման ժամանակ 24 փորձարկվողների համար գիտնականները փոխեցին մեկ պատկեր եւ մեկ հոտ: Վարդի հետ բանան էին ցույց տալիս, իսկ վերջինիս հոտը վերարտադրում էին բանանի հոտ ունեցող նյութով: Համապատասխան հոտը կամ վարդի կամ բանանի պատկեր էր առաջացնում:

Գիտնականներն ստացված արդյունքները բացատրում են նրանով, որ ուղեղի կեղեւի տեսողական եւ հոտառական հատվածների միջեւ կապ գոյություն ունի, այդ պատճառով էլ հոտային ինֆորմացիան ազդում է տեսողականի վրա: Դա տեղի է ունենում անգիտակցական մակարդակում:

Այլ կերպ ասած՝ աչքերը տեսնում են այն, ինչ զգում է քիթը, գրում են գիտնականները Current Biology ամսագրում տպագրված հոդվածում:

Հնարավոր է, որ զգայարանների այդպիսի փոխազդեցությունը պետք գա վիրտուալ իրականության տեխնոլոգիաներ մշակողներին:

Սպիտակեցնել լեռները

Նման ծայրահեղ քայլի են դիմել պերուացի ակտիվիստները՝ ալբեդոն (երկրի արտացոլող հատկությունը) ավելացնելու համար: Հենց այդպես, խմբի ղեկավար էդուարդ Գոլդի կարծիքով, կհաջողվի պահպանել պերուական Անդերի սառույցները լրիվ ոչնչացումից:

Վերջին 35 տարիների ընթացքում գլոբալ տաքացման հետեւանքով Պերուական սառույցները պակասել են 22 տոկոսով: Սառույցների հալվելը դանդաղեցնելու նպատակով ակտիվիստները պատրաստվում են Անդերի բարձր լեռնային շրջանների մոտ 687 960 քառ.մ ներկել էկոլոգիական սպիտակ ներկով:

Հ.Գ. *Այս միջոցի արդյունավետությունը, սակայն, մասնագետները բավական կասկածելի են համարում: Պերուացիները պետք է հաշվի առնեն նաեւ հնարավոր բացասական հետեւանքները կենդանի օրգանիզմների համար: Օրինակ, որոշ վայրի կենդանիներ լավ նկատելի կդառնան սպիտակ ֆոնի վրա:*

արտակարգ ժամանց

Անհավանական պատմությունների շարքից

Էլեկտրոնայինը՝ սեփականից թանկ

Ֆրանսիայի Մարսել քաղաքի մայրուղիներից մեկով սլացող մի ավտոմեքենա կորցնում է կառավարումն ու բախվում մայթեզրի ծառին: Մեքենայի ղեկին 27-ամյա մի կին էր, կողքին՝ նրա սիրեկանը: Պատահարի հետեւանքով կինը տեղում մահանում է, իսկ տղամարդը՝ ծանր վնասվածքներ ստանում:

Ճանապարհային ոստիկանությունը նշում է, որ սա առանձնահատուկ դեպք է, քանի որ դժբախտ պատահարի պատճառ էր դարձել… ավտոմեքենայի բանալուց կախված «Տամագոչի» խաղալիքը: Պատահարից վայրկյաններ առաջ խաղալիքը սկսում է ձայնային ազդանշան արձակել, ինչը նշանակում էր, որ «ինքը

քաղցած է, եւ շտապ պետք է կերակրել»: Ցանկանալով «փրկել» էլեկտրոնային խաղալիքի կյանքը՝ կինը զոհում է իր ու վտանգում՝ ընկերոջ կյանքը:

Բերանը բաց

Բրազիլիայում մի ձկնորս նստած էր նավակի մեջ ու բերանը լայն բացած՝ կախվել էր նավակի եզրից: Նրա ընկերների խոսքերով՝ հանկարծ ջրից դուրս է թռչում մի ձկնիկ եւ մտնում ուղիղ… ձկնորսի բերանը: Տղամարդը խեղդվում է ու մահանում:

Կենաց-մահու մերժում

ԱՄՆ-ի եկեղեցիներից մեկում պատարագի ժամանակ թունավոր օձը խայթում է մի տղամարդու ձեռքը: Սակայն նրա կինը, չգիտես ինչու, թույլ չի տալիս, որպեսզի ամուսնուն առաջին օգնություն ցույց տան: Ներկաներն ահազանգում են շտապօգնություն: Երբ շտապօգնության բրիգադը հասնում է եկեղեցի, տուժածի ձեռքը սարսափելի ուռել էր: Նա արդեն չէր կարողանում խոսել եւ ի վիճակի չէր համաձայնություն տալ՝ բժշկական օգնության համար: Բժիշկները թույլտվություն են հարցնում նրա կնոջից, սակայն կինը կրկին մերժում է:

Տեղի օրենքների համաձայն՝ եթե մարդն ի վիճակի չէ բուժման համար համաձայնություն տալու, ապա բժիշկները դրան կարող են հասնել դատարանի միջոցով: Դատարանը կարող է պահանջել, որ նրան բուժեն: Մինչեւ շտապօգնության բժիշկները գնում են դատարան եւ այնտեղից վերադառնում դատավորի թույլտվությամբ՝ տղամարդը մահանում է:

Զախորդ Փանոսը

ԱՄՆ-ում մի տղամարդ մեքենայով ընթանում էր ճանապարհով, երբ հանկարծ մի հսկա ծառ է ընկնում մեքենայի բեռնախցիկի վրա: Վարորդը դուրս է գալիս ավտոմեքենայից ու անցնում մեքենայի հետնամաս, որպեսզի տեսնի, թե ինչ է պատահել: Տղամարդը կռանում է ու սկսում ուսումնասիրել մեքենայի վնասված հատվածը: Այդ պահին ծառը բեռնախցիկից գլորվում է ներքեւ, եւ տղամարդը, մնալով հսկա ծառի բնի տակ, մահանում է:

440 վոլտ

Մեծ Բրիտանիայում արքայական ռազմածովային նավատորմի նավերն ափին են միանում 440 վոլտ լարման տակ գտնվող մալուխներով: Սա քչերը գիտեն, իսկ ծովայիննե՞րը…

Օրերից մի օր հարբած մի նավաստի, որն ընկերների հետ անհայտ թվով գարեջրի շշեր էր դատարկել մոտակա պանդոկում, ուշ երեկոյան վերադառնում է նավ: Սակայն նախքան նավ բարձրանալը՝ նա որոշում է դատարկել միզապարկը, եւ ոչ այլ ուր՝ քան ծովի պաղ ջրերում: Ի դժբախտություն իրեն՝ բարձրավոլտ էլեկտրական մալուխի ռետինե մեկուսիչ շերտը վնասված է լինում… Նավաստին հոսանքահարվում է, ընկնում ծովն ու մահանում:

Սիրային արտակարգ իրավիճակ

Չինաստանում մի երիտասարդ հեռախոսի օգնությամբ նկարահանել էր մերկ մի տղամարդու, որը դուրս էր եկել սիրուհու պատուհանից ու հանգրվանել դրսում տեղադրված օդափոխիչի վրա: Դրա շնորհիվ Սեն Մինն, իհարկե, խուսափում է սիրուհու ամուսնու հետ երես առ երես բախումից, սակայն ոչ խայտառակությունից: Շենքի հարեւանները, նրան տեսնելով, ահազանգում են փրկարար ծառայություն: Մինի սիրուհու ամուսինը գուցե այդպես էլ ոչինչ չէր իմանա կնոջ դավաճանության մասին, եթե նրանց հարեւաններից մեկը հեռախոսի օգնությամբ չնկարահաներ անհաջողակ սիրեկանին փրկելու տեսարանը եւ այն չտեղադրեր ինտերնետային սոցիալական կայքերից մեկում:

Թունավոր բազմոցներ

Մեծ Բրիտանիայում կահույքի առքուվաճառքով զբաղվող երկու հայտնի ընկերություն ստիպված են չինական արտադրության բազմոցներ գնած իրենց 2000-ից ավելի հաճախորդներին փոխհատուցում վճարել: Փոխհատուցման ընդհանուր գումարը կազմում է շուրջ 20 միլիոն ֆունտ ստեռլինգ: Բանն այն է, որ չինական արտադրողները կաշվե բազմոցները պահեստներում բորբոսից պաշտպանելու համար երեսպատման տակ ինչ-որ քիմիական նյութով լի փոքրիկ փաթեթներ են տեղադրել, որն ուժեղ ալերգիա է առաջացրել:

«Թունավոր» բազմոցներից առաջին տուժածներից մեկը Իվոնա Դալթոնն էր, որը բազմոցը ձեռք էր բերել «Արգոս» կահույքի սրահից դեռեւս 2007 թվականին: «Գնումից մեկ տարի անց իմ ձեռքերի ու ոտքերի վրա ինչ-որ տարօրինակ կարմիր ցան հայտնվեց, իսկ մի քանի շաբաթ հետո մաշկս բլիթ-բլիթ էր լինում ու շերտազատվում: Դա ահավոր ցավոտ էր, ես ոչինչ չէի կարողանում անել ու չէի հասկանում, թե ինչ է ինձ հետ կատարվում»,- պատմում է Իվոնան: Բժիշկները նույնպես չէին կարողանում որեւէ բացատրություն տալ կամ բուժում նշանակել: Վերջիվերջո, Լիվերպուլից մի մաշկաբան կարողանում է վեր հանել ալերգիայի բազմաթիվ դեպքերի ու չարաբաստիկ չինական բազմոցների միջեւ եղած կապը: Դիմեթիլային ֆումարատը սպիտակ փոշի է, որը ոչնչացնում է բորբոսի սնկերը: Արեւելյան Ասիայի երկրներում, որտեղի կլիման չափազանց խոնավ է, այդ նյութը լայնորեն կիրառում են կաշվե իրերի՝ կոշիկների, պայուսակների, կահույքի պահպանության համար: Անգլիական տների տաք ու չոր միջավայրում քիմիական նյութն սկսել է ցնդել ու տարածվել մթնոլորտում:

Եվրամիությունը միջոցներ է ձեռնարկում այդ նյութի կիրառությունն իր անդամ-երկրների տարածքում ընդհանրապես արգելելու համար, քանի որ այն նույնիսկ չնչին քանակով կարող է շատ ուժեղ ու մահացու ալերգիա առաջացնել:

Վայրի խոզ / Ձոկ	⇨	⇩		⇩		Գետնի մեջ խրված ցից	⇨	Պեպոյի քույրը / Սամոյեդ	⇨	Վայրի շուն / Ուժի չափման միավոր	⇨
⇩	Ձվող մեծ թռչուն / Ատամներից զուրկ		Բոց(ժող.) / Տասը միավոր պարունակող		Ձոն... / Ժամացույցի բարակ զսպանակ	⇨		⇩		⇩	
⇨			⇩		⇩	Չինաստան / «3+2» ֆիլմի հերոս	⇨				
	Կամո / 12-ն են	⇨				⇩	Ստոր / Միեւնույն կարծիք ունեցող	⇨			
⇨				Ինչ-որ բանից իրեն զրկել	⇨		⇩			Մերկ, առանց զգեստի	
	Բանիմաց / Թավուտ	⇨							Հասարակ	⇩	«Մոբի ...»
Անոդ	⇩	Երկաթի եւ ածխածնի համաձուլվածք		Կալ անելու գործիք / Խարանել (ժող)	⇨			Սպասարկու մասնիկ / 12 ամիս	⇨ ⇩		⇩
⇨		⇩		⇩	Ռուս էստրադային երգչուհի	⇨		⇩			
Ցանկ / Կապակցանյութ	⇨					էգ ձի	⇨				
⇨			Թանաք		Գեղեցիկ / Հասկացող	⇨					Մեղվի «կաթը»
Օրվա պահ		Գամ / Վլադիմիր Իլյիչ	⇨ ⇩		⇩	Կնոջը դիմելու ձեւ	⇨				⇩
⇩	Ժողովրդական պարերգ / ...-թափել	⇨ ⇩									
⇨				Թաց, խոնավ							
	Անանուխի տեսակ	⇨		⇩							
⇨											
	Կուսակցություն՝ «... երկիր»		Չափման միավոր	⇨							

§²ñï³Ï³ñ·Ã»ñÃ¦
ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ »ñ Ññ³ï³ñ³ÏÇã
§²ñï³Ï³ñ·³ÉÇù¦
Éñ³ïí³Ï³Ý Ï»ÝïñáÝ ê ä À

îÝûñ»Ý`
ÜáõÝ» ¶ñÇ·áñù³Ý
¶ÉËë³íáñ ËÙµ³·Çñ`
ÜÇÏáÉ³ù ¶ñÇ·áñù³Ý

ÊÙµ³·ñÇ ï»Õ³Ï³É`
²í³. º÷ñ»Ùù³Ý
Ò»ñ³íáñáÕ`
ì³ñ¹³Ý ¶³ëå³ñù³Ý

ºñ»ñ³Ý, ä áõßÏÇÝÇ 25
Ð»é. 56 76 56, 24 24 22
E - mail: tert@emergency.am

îå³·ñí³Í ¿ §îÇ·ñ³Ý Ø»Í¦ Ññ³ï³ñ³ÏãáõÃù³Ý
ïå³ñ³ÝáõÙ` ²ñß³ÏáõÝù³ó 2
Ì³í³ÉÁ` 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáõÉ
ä³ïí»ñ`435, ·ñ³ÝóÙ³Ý íÏ³ù³Ï³Ý` 1074,
ïå³ù³Ý³ÏÁ` 4870 ûñÇÝ³Ï:
Ստորագրված է տպագրության
08.7.2010 թ.